ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-61

Հիմնաբառեր. *տնտեսական ձախողում, տնտեսական ինստիտուտներ, ճգնաժամեր, Հայաստանի տնտեսության մարտահրավերներ*



Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս, տնտեսագիտության թեկնածու

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի հասլսարանում՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6488-2717

Երկրների տնտեսական հաջողությունը կամ ձախողումը բազմագործոն երևույթ է՝ պայմանավորված մի շարք իրադարձություններով ու շարժառիթներով: Համաշխարհային պատմության տարբեր շրջափուլերում մի շարք երկրներում արձանագրվել են տնտեսական հետընթացի, լճացման ու նույնիսկ փլուզման դեպքեր:

Ֆինանսատնտեսական ճգնաժամերը, որպես տնտեսական պարբերաշրջանի անբաժանելի փուլեր, առաջացնում են «ավերածություններ» ինչպես առանձին երկրներում, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում՝ ի հայտ բերելով սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրներ ու մարտահրավերներ:

Այս համատեքստում առանցքային նշանակություն են ստանում երկրների տնտեսական ձախողման պատճառների տեսական հիմքի վերհանումը, առարկայական օրինակների քննարկումը և, որ ամենակարևորն է, Հայաստանի տնտեսության ձախողման ակունքների վերլուծությունը: Այս ամենի ուսումնասիրությունը կարող է ուսանելի լինել՝ տնտեսական ցնցումների կանխարգելման ու ռիսկերի նվազեցման տեսանկյունից:

Տեսական հիմք

Պետությունների ձախողման պատճառները տարիներ շարունակ ակադեմիական շրջանակի քննարկման օրակարգում են: Ամենահայտնի ուսումնասիրությունն այս առումով, թերևս, պատկանում է տնտեսագետներ Դարոն Աճեմօղլուին և Ջեյմս Ա. Ռոբինսոնին: Վերջիններս պետությունների ձախողման կամ հաջողության հիմնական շարժիչ ուժեր են համարում տնտեսա-

կան ինստիտուտները: Այս հայեցակետը, իհարկե, բավական համոզիչ է և մտածելու տեղիք է տալիս: Ոչ ոք չի կարող հերքել, որ քաղաքական և տնտեսական կայուն ինստիտուտները վճռորոշ դեր ունեն յուրաքանչյուր երկրի զարգացման գործում: Բացի այդ, «Ինչո՞ւ են ձախողում պետությունները» գրքում նշված հեղինակներն ակնհայտորեն ցուցաբերում են միջգիտակարգային մոտեցում: Նրանք միավորում են տնտեսագիտության, պատմության, քաղաքագիտության և սոցիոլոգիայի պատկերացումները՝ փորձելով ձևավորել ամբողջական տեսակետ ազգի զարգացման վրա ազդող գործոնների վերաբերյալ: Աճեմօղլուն և Ռոբինսոնը ներկայացնում են բազմաթիվ պատմական դեպքեր, որոնք առնչվում են Հին Հռոմին, Չինաստանի ու Զիմբաբվեի նման ժամանակակից ազգերին՝ հաստատելով իրենց բերած փաստարկները[1]:

Սակայն, այս ականավոր տնտեսագետների հայտնի գիրքը չի կարելի համարել պետությունների ձախողման «հանրագիտարան»՝ պայմանավորված մի շարք գործոններով: Ամենևին չնսեմացնելով տնտեսական ինստիտուտների կարևորությունն ու առանցքային դերակատարումը երկրների հաջողության կամ ձախողման հարցում՝ հարկ ենք համարում նշել, որ տնտեսական զարգացման ոչ պակաս կարևոր գործոններ են մշակույթը, բնաաշխարհագրական դիրքը, պատմական ժառանգությունը և այլն: Այս դիտանկյունից նայելով՝ համոզվում ենք, որ միայն տնտեսական ու քաղաքական արդյունավետ ինստիտուտների առկայությունը երկրների զարգացման հենասյուն համարելը փոքր-ինչ պարզունակ է դարձնում այս բավական բարդ ու համակարգային խնդիրը: Մյուս կողմից, ժամանակակից աշխարհում զարգացման հայեցակարգերը զգալիորեն տարբերվում են պատմական «դասերից», իսկ ժամանակակից մարտահրավերները, իրենց հերթին, անհամեմատելի են ու չկրկնվող: Այս առումով, հեղինակների քննարկման ծիրից դուրս է մնում հատկապես ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և տնտեսական ինստիտուտների միջև փոխառնչությունների խնդիրը՝ համաշխարհային տնտեսության գլոբալացման ընդլայնվող միտումների համատեքստում:

Երկրների տնտեսական ձախողման վճռորոշ պատճառներից է եկամուտների անհավասարությունը: Առկա ռեսուրսների կենտրոնացումը հասարակության փոքր զանգվածի ձեռքերում լրջորեն խոչընդոտում է երկրի տնտեսական ու սոցիալական բևեռվածության ու բաժանումների խորացման հաղթահարումը, սահմանափակում տնտեսական ռեսուրսների շարժունակությունը, բաշխման ու վերաբաշխման արդյունավետ գործընթացները:

Թոմաս Պիկետին իր «Կապիտալը 21-րդ դարում» գրքում հանգամանորեն ներկայացրել է, թե ինչպես կարող է հարստության անհավասարության շարունակականությունը թուլացնել տնտեսական աճի ու կայունության ապահովման հնարավորությունները զարգացած ու զարգացող երկրներում[2]:

Պիկետիի հիմնական փաստարկն այն է, որ կապիտալիստական տնտեսական համակարգը հանգեցնում է հարստության աճող կենտրոնացմանը մի քանի անձանց ձեռքերում: Նա իր թեզը հաստատելու համար վերլուծում է տարբեր երկրների լայնածավալ պատմական տվյալներ, որոնք ընդգրկում են մի քանի դար: Գրքի հիմնական արժեքը հարստության կուտակման և եկամուտների բաշխման երկարաժամկետ միտումների մանրակրկիտ ուսումնասիրության մեջ է:

Ըստ Պիկետիի՝ երբ կապիտալի վերադարձի տոկոսադրույքը գերազանցում է տնտեսական աճի տեմպերը, հարստության անհավասարությունը հակվում է դեպի խորացում: Այս տեսությունը ենթադրում է, որ հարուստներն ավելի արագորեն են հարստություն կուտակում, քան աճում է ընդհանուր տնտեսությունը, ինչն էլ հանգեցնում է անհավասարության շարունակականությանը[3]:

[1] Acemoglu, D., Robinson J. A, 2012. Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty (1st). 1st ed. New York: Crown, 25.
[2] Piketty Th., Capital in the Twenty-First Century, 2013, Éditions du Seuil, Harvard University Press, p. 54.
[3] Նույն տեղում, էջ 478:

Ինչ խոսք, Պիկետիի հետազոտությունը յուրօրինակ մարտահրավեր է ավանդական տեսակետին, համաձայն որի՝ տնտեսական աճը հանգեցնում է անհավասարության կրճատմանը: Նա հիմնավորել է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ժամանակաշրջանին բնորոշ է եղել ինչպես ուժեղ տնտեսական աճը, այնպես էլ երկրներում տնտեսական անհավասարության խորացումը: Որպես հասարակության անհավասարության հաղթահարման հիմնական լուծում՝ հեղինակն առաջարկել է թիրախային ու հասցեական տնտեսական քաղաքականության կիրառումը, առանց որի՝ մենք ականատես կլինենք այդ երևույթի խորացմանն ու հասարակության բևեռացմանը, որոնք, ի վերջո, կհանգեցնեն երկրների տնտեսական ձախողումներին:

Իհարկե, Պիկետիի քննադատները պնդում են, որ նրա վերլուծությունը հիմնված է պատմական տվյալների վրա, ինչը չի կարող հիմք լինել ապագա ենթադրությունների համար: Կասկածի տակ են դրվում հեղինակի բացահայտումների համընդհանուր կիրառելիությունը՝ ենթադրելով, որ տարբեր երկրներ և տարածաշրջաններ կարող են դրսևորել անհավասարության տարբեր օրինաչափություններ: Մասնագիտական շրջանակներում բավական լուրջ քննադատության ալիք է բարձրացել նաև Պիկետիի առաջարկած հարստության համաշխարհային հարկի կառուցակարգի դեմ, որի կիրառման հետ կապված՝ արտահայտվել են մի շարք մտահոգություններ: Այնուամենայնիվ, Պիկետիի գիրքն անհերքելիորեն նոր հետաքրքրություն է առաջացրել անհավասարության ուսումնասիրության նկատմամբ և քաղաքականություն մշակողներին դրդել ավելի լրջորեն անդրադառնալու խնդրին: Հեղինակը կարողացել է ստեղծել հարթակներ, որտեղ աշխուժացել են քննարկումները աճող անհավասարության հետևանքների, այդ թվում՝ սոցիալական շարժունակության, քաղաքական կայունության և տնտեսական աճի վրա անհավասարության ազդեցության շուրջ:

Միաժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ երկրների ձախողման պատճառ հանդիսացող տնտեսական անհավասարությունները հանգեցնում են սոցիալական «ցնցումների» և խաթարում հասարակության համախմբվածությունը՝ բացասաբար անդրադառնալով ներդրումների, արտադրողականության և ընդհանուր տնտեսական գործունեության վրա:

Ջ. Օստրիի, Ա. Բերգի և Ջ. Ցանգարիդեսի՝ 2014 թվականին հրատարակած «Վերաբաշխում, անհավասարություն և աճ» աշխատությունում ուսումնասիրվում է կապը եկամուտների անհավասարության և տնտեսական կայունության միջև[4]: Հետազոտության նպատակն է պարզել՝ ինչպես է եկամուտների անհավասարության նվազեցումն ազդում երկրի տնտեսական աճի և կայունության վրա: Հեղինակները 150 երկրների օրինակով, ըստ երեք տասնամյակի տվյալների, կատարել են եկամուտների անհավասարության տարբեր չափումներ, ներառյալ՝ Ջինիի գործակիցը, ապա գնահատել ազդեցությունը տնտեսական աճի վրա, ինչպես նաև տնտեսական ճգնաժամերի հավանականությունն ու դրանց տևողությունը: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ գոյություն ունի ուժեղ կապ եկամուտների անհավասարության և տնտեսական կայունության միջև: Ընդ որում, եկամուտների անհավասարության բարձր մակարդակը կարող է զգալիորեն խոչընդոտել տնտեսական աճը և մեծացնել ֆինանսական ճգնաժամերի հավանականությունը: Ավելին, եկամուտների անհավասարության նվազեցման քաղաքականությունը կարող է դրականորեն ազդել տնտեսական կայունության և աճի վրա: Հեղինակները պնդում են, որ այնպիսի վերաբաշխիչ քաղաքականությունների կիրառումը, ինչպիսիք պրոգրեսիվ հարկումը և նպատակային սոցիալական ծախսերը, կարող են օգնել մեղմել անհավասարության բացասական ազդեցությունը[5]:

Պետք է հստակ կերպով արձանագրել,

[4] Jonathan D. Ostry, Andrew Berg, and Charalambos G. Tsangarides, “Redistribution, Inequality, and Growth”, April 2014, https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2014/sdn1402.pdf

[3] Նույն տեղում:

որ եկամուտների անհավասարության և երկրի տնտեսական կայունության ու երկարաժամկետ զարգացման միջև կապերը բավական բարդ են ու ոչ գծային: Բայց և այնպես, մի շարք հետազոտություններ վկայում են, որ եկամուտների անհավասարաչափ բաշխվածությունը երկրի տնտեսական ձախողման հիմնական շարժառիթներից է, ուստի անհրաժեշտ է գործադրել համապատասխան ջանքեր ու կիրառել թիրախային գործիքակազմ՝ կարգավորելու այս խնդիրը:

Երկրներում «առողջ» ինստիտուտների առկայությունն ու կարգավորող շրջանակների որակն առանցքային դեր ունեն տնտեսական ձախողումների կանխարգելման ու հաջողությունների արձանագրման համար: Թույլ կամ ոչ համապատասխան ինստիտուտները հաճախ չեն կարողանում իրացնել սեփականության իրավունքը, ապահովել պայմանագրերի կատարումը կամ ստեղծել բիզնեսի համար արդար ու հավասար պայմաններ: Այս ինստիտուցիոնալ ուժի բացակայությունը խաթարում է ներդրողների վստահությունը և ճնշում տնտեսական աճը: Համաշխարհային բանկի «Doing Business 2020» զեկույցում (2020) նույնպես կարևորվում է ամուր ինստիտուտների և կարգավորող շրջանակի առկայության փաստը: Ուժեղ ինստիտուտներ ունեցող երկրները հակված են տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի, մինչդեռ թույլ ինստիտուտներ ունեցող երկրները պայքարում են ներդրումներ ներգրավելու և տնտեսական լճացման դեմ:

Երկրների տնտեսական ձախողումների դրդապատճառներից է նաև բնական ռեսուրսներից կախվածությունը: Այս երևույթը, որը հայտնի է որպես «ռեսուրսների անեծք» կամ «հոլանդական հիվանդություն», տեղի է ունենում, երբ բնական ռեսուրսներին վերաբերող եկամուտների հանկարծակի ներհոսքը հանգեցնում է տնտեսության այլ ոլորտների անկմանը, ինչպիսիք են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Չափից ավելի կախվածությունը մեկ ռեսուրսից տնտեսությունը խոցելի է դարձնում ապրանքների համաշխարհային գների տատանումների նկատմամբ: «Հոլանդական հիվանդության» գաղափարը ծագել է 1960-ական թվականներին, հիմնվելով Նիդերլանդների փորձի վրա, երկրում բնական գազի պաշարների հայտնաբերումից հետո: Գազի արտահանումից եկամուտների հանկարծակի ներհոսքն անցանկալի հետևանք ունեցավ Նիդերլանդների տնտեսության վրա՝ երևան բերելով «հոլանդական հիվանդություն» եզրույթը:

«Հոլանդական հիվանդության» հիմնական առանձնահատկությունը փոխարժեքի արժևորումն է: Երբ բնական պաշարների արտահանումը երկրում ստեղծում է զգալի եկամուտ, հնարավոր է՝ տեղի ունենա ազգային արժույթի արժևորում՝ այդպիսով համաշխարհային շուկայում պակաս մրցունակ դարձնելով ոչ հումքային ոլորտները, այդ թվում՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, հանգեցնելով արտադրանքի, զբաղվածության և մրցունակության անկման: Հետևաբար՝ բնական ռեսուրսների արտահանումից մեծ կախվածության առկայությունը տնտեսությունը խոցելի է դարձնում ապրանքների գների տատանումների նկատմամբ: Ռեսուրսների գների կտրուկ անկումը կարող է բացասաբար անդրադառնալ կառավարության եկամուտների և ընդհանուր տնտեսական կայունության վրա, երկրում կարող է սրվել եկամուտների անհավասարության երևույթը: Ռեսուրսների հետ կապված հարստության հանկարծակի ներհոսքը հաճախ օգուտ է բերում բնակչության մի փոքր հատվածին միայն, օրինակ՝ բնական պաշարների արդյունահանմամբ և արտահանմամբ զբաղվողներին:

«Հոլանդական հիվանդությունը» թեև ծագել է Նիդերլանդներում, սակայն դրսևորվել է աշխարհի բազմաթիվ այլ երկրներում: Օրինակ՝ Վենեսուելան, որն ունի նավթի հսկայական պաշարներ, պատմականորեն կախված է նավթի արտահանումից: Նավթային եկամուտների ներհոսքը հանգեցրել է վենեսուելական բոլիվարի արժևորմանը՝ ոչ նավթային հատվածները դարձնելով ավելի քիչ մրցունակ: Արդյունաբերության այլ ոլորտների անտեսումը, զուգորդված վատ կառավար-

ման և կոռուպցիայի հետ, նպաստել է տնտեսական անհավասարակշռության, բարձր գնաճի և նավթային եկամուտներից չափազանց մեծ կախվածության երևույթների ի հայտ գալուն: Նույն կերպ, Նիգերիան, որն Աֆրիկայի ամենամեծ նավթարդյունահանող երկրներից է, եկամուտների առումով, մեծապես կախված է նավթի արտահանումից: Նավթից եկամտի ներհոսքը հանգեցրել է նիգերիական նեյրայի արժևորմանը՝ ազդելով այլ ոլորտների մրցունակության վրա:

Հաջորդ երկիրը, որտեղ «հոլանդական հիվանդության» դրսևորումներ են արձանագրվել, Ռուսաստանն է, որի չափից ավելի հիմնվածությունը բնական ռեսուրսների վրա երկրի տնտեսությունը դարձրել է կախված նավթի գնի տատանումներից՝ խոչընդոտելով բազմազանեցման և զարգացման գործընթացները:

Ադրբեջանի տնտեսությունը նույնպես զերծ չէ «հոլանդական հիվանդությունից»: Վերջին մի քանի տարիների ընթացքում երկիրը զգալի տնտեսական աճ է գրանցել նավթային հատվածի շնորհիվ: Նավթի արդյունահանումն ու արտահանումն աճել են՝ այդպիսով վերածվելով տնտեսության առաջատար ճյուղի: Ոլորտի հսկայական եկամուտները, պայմանավորված նավթի բարձր գներով և դրա արդյունահանման ընդլայնմամբ, պետական ծախսերի մեծածավալ աճի հիմնական աղբյուրներ են: Այս ծախսերի հիմնական մասն ուղղված է տնտեսության ոչ առևտրային հատվածին՝ ենթակառուցվածքների և սոցիալական նախագծերի զարգացմանը, որոնք օգտակար են սոցիալ-տնտեսական առաջխաղացման համար: Սակայն, մյուս կողմից, սա հանգեցրել է այլ ոլորտներում արտահանման ծավալների կրճատմանը, ադրբեջանական մանաթի իրական արդյունավետ փոխարժեքի շարունակական արժևորմանը, որոնց հետևանքով Ադրբեջանի տնտեսության այլ հատվածներում մրցունակության անկում է գրանցվում: Այս ամենն Ադրբեջանի տնտեսության զարգացման համար լուրջ մարտահրավերներ է ստեղծում՝ հանգեցնելով ինչպես կառուցվածքային, այնպես էլ քանակական ցուցանիշների նվազմանը:

Գործնական օրինակներ

Ներկայացնենք համաշխարհային տնտեսությունը ցնցած հինգ խոշոր ճգնաժամերի պատմություններ:

1. 1772 թվականի պարտքային ճգնաժամը

Լոնդոնում սկիզբ առած, ապա Եվրոպայում տարածված պարտքային ճգնաժամը, որը հայտնի է նաև որպես 1772 թվականի խուճապ, նշանակալի ֆինանսական իրադարձություն էր: Այն մեծ ազդեցություն ունեցավ բրիտանական տնտեսության վրա՝ ընդգծելով տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական համակարգի խոցելիությունը: Ճգնաժամը ծագեց ընդարձակվող բրիտանական կայսրությունում՝ արագ զարգացող արդյունաբերական և առևտրային հատվածների խորապատկերում[6]: Ճգնաժամին նախորդող ժամանակաշրջանը նշանավորվել է առևտրի, սպեկուլյացիաների աճով, ֆինանսական բարդ գործիքների ի հայտ գալով: 1760-ականների կեսերին Բրիտանական կայսրությունը հսկայական հարստություն էր կուտակել՝ շնորհիվ իր գաղութային ունեցվածքի և առևտրի: Տնտեսությունը սնվում էր վարկերով, իսկ բաժնետիրական ընկերությունների թիվն անընդհատ աճում էր: Հաջողությունների այս շղթան կտրուկ կերպով կտրվեց 1772 թվականի հունիսի 8-ին, երբ Ալեքսանդր Ֆորդայսը, որը բրիտանական Նիլ, Ջեյմս, Ֆորդայս և Դաուն բանկի գործընկերներից մեկն էր, փախավ Ֆրանսիա՝ խուսափելով իր պարտքի մարումից: Լուրն արագորեն տարածվեց՝ բանկային խուճապ առաջացնելով Անգլիայում: Պարտատերերը երկար հերթեր կազմելով բրիտանական բանկերի դիմաց՝ պահանջում էին ակնթարթային կանխիկացում իրականացնել: Ճգնաժամը հետագայում տեղափոխվեց Շոտլանդիա, Նիդերլանդներ, Եվրոպայի այլ հատվածներ և բրիտանական գաղութներ: Պատմաբանները պնդում են, որ այս ճգնաժամը նպաստեց «բոստոն-

[6] Chancellor E., A New View of the Bubble of 1720, 1999, p. 59.

յան թեյախմությանը» և ԱՄՆ-ի քաղաքացիական հեղափոխությանը: Ճգնաժամի հետևանքներն անհոգելի էին. լրջորեն տուժեց առևտուրը, ինչը հանգեցրեց սնանկությունների, կրճատումների և տնտեսական անկման: Շատ անհատներ ու բիզնեսներ կրեցին զգալի ֆինանսական կորուստներ, և խաթարվեց հասարակության վստահությունը ֆինանսական համակարգի նկատմամբ:

2. 1929-1939 թվականների Մեծ դեպրեսիան

Սա համարվում է 20-րդ դարի ամենասարսափելի ֆինանսատնտեսական աղետը: Սկիզբ է առել 1929 թվականին՝ Ուոլ Սթրիթի փլուզմամբ, ապա սրվել ԱՄՆ-ի կառավարության քաղաքական վատ որոշումների պատճառով: Ճգնաժամը տևել է գրեթե 10 տարի՝ հանգեցնելով եկամուտների զանգվածային կորստի, գործազրկության ռեկորդային մակարդակի և արտադրության ծավալների կրճատման՝ հատկապես զարգացած արդյունաբերական երկրներում: 1933 թվականին՝ ճգնաժամի գագաթնակետին, Միացյալ Նահանգներում գործազրկության մակարդակը հասել է գրեթե 25 տոկոսի[7]:

Ընդհանուր առմամբ, Մեծ դեպրեսիայի հիմքում հետևյալ գործոններն էին.

- Ֆոնդային շուկայի փլուզում. 1929 թվականին Ուոլ Սթրիթի փլուզումը կամ «Սև երեքշաբթին» նշանավորել է որպես Մեծ դեպրեսիայի սկիզբ: Փլուզման պատճառ են դարձել սպեկուլյատիվ գործառնությունները, բաժնետոմսերի գերագնահատումը և արդյունավետ կարգավորման բացակայությունը:
- Վարկային և պարտքային ճգնաժամ. մինչև բորսայի փլուզումը՝ հեշտ վարկերը և չափից ավելի շատ փոխառությունները հանգեցրել էին պարտքերի կուտակման: Քանի որ տնտեսությունը թուլացած էր, շատ վարկառուներ պայքարում էին իրենց վարկերը մարելու համար, ինչի հետևանքով ֆինանսական հաստատությունները փլուզվեցին:
- Համաշխարհային տնտեսական անհավասարակշռություն. հարստության ոչ կանոնակարգված բաշխումը, եկամուտների անհավասարությունը և ազգերի միջև առևտրի անհավասարակշռությունը խթանեցին դեպրեսիայի տարածումը:
- Հովանավորչական քաղաքականություն. հովանավորչական միջոցառումները, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում ընդունված Սմութ - Հոուլիի սակագնային օրենքը, վատթարացրին տնտեսական պայմանները՝ նվազեցնելով միջազգային առևտուրը և ուժգնացնելով տնտեսական ակտիվության անկումը[8]:

Այսպիսով՝ Մեծ դեպրեսիան խոր ազդեցություն ունեցավ ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ամբողջ համաշխարհային տնտեսության վրա՝ տարբեր տեսանկյուններից: Մասնավորապես՝ զանգվածային գործազրկությունը դարձավ համատարած խընդիր, քանի որ բիզնեսները ձախողեցին, և արտադրությունը նվազեց: Տնտեսական ճգնաժամն ուղղակիորեն անդրադարձավ նաև աղքատության մակարդակի վրա՝ կտրուկ կերպով ավելացնելով անօթևան մնացածների ու սովյալների թիվը: Ճգնաժամը տարածվեց ամբողջ աշխարհում՝ հանգեցնելով համաշխարհային առևտրի, ներդրումների և արդյունաբերական արտադրության նվազմանը: Քաղաքական հետևանքները նույնպես զգալի էին՝ որոշ երկրներում ուղեկցվելով սոցիալական անկարգություններով և ծայրահեղական գաղափարախոսությունների աճով:

3. 1973 թվականի ՕՊԵԿ-ի նավթի գների շոկը

Այս ճգնաժամը սկսվեց այն ժամանակ, երբ ՕՊԵԿ-ի (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) անդամ երկրները, հիմնականում՝ արաբական, որոշեցին վրեժխնդիր լինել Միացյալ Նահանգներից, քանի որ վերջինս արաբա-իսրայելական չորրորդ պատերազմի ժամանակ զենք էր մատակարարել Իսրայելին: ՕՊԵԿ-ի երկրները նավթի էմբարգո հայտարարեցին՝ կտրուկ դադարեցնելով դրա արտահանումն ԱՄՆ և նրա դաշնակից

[7] Charles P. Kindleberger, The World in Depression, 1929–1939, 40th Anniversary Edition, January 2013.
[8] Benjamin Roth, "The Great Depression: A Diary", August 31, 2010, p. 124.

երկրներ: Սա առաջացրեց նավթի գների կտրուկ աճ և այդ ռեսուրսի մեծ պակասուրդ, ինչն էլ, իր հերթին, հանգեցրեց էներգակիրների թանկացման և տնտեսական լճացման: Տնտեսագետներն այս շրջանն անվանեցին «ստագֆլյացիայի» (ստագնացիա՝ գումարած գնաճ) ժամանակաշրջան: Մի քանի տարի պահանջվեց, որպեսզի դրանից հետո վերականգնվի արդյունահանումը, իսկ գնաճը հասնի նախաճգնաժամային մակարդակին:

4. 1997 թվականի Ասիական ճգնաժամը

Այս ճգնաժամը ծագեց Թաիլանդում՝ 1997 թվականին և արագորեն տարածվեց Արևելյան Ասիայի ու վերջինիս առևտրային գործընկեր երկրներում: Զարգացած երկրներից կապիտալի սպեկուլյատիվ հոսքերը դեպի Արևելյան Ասիայի տնտեսություններ՝ Թաիլանդ, Ինդոնեզիա, Մալայզիա, Սինգապուր, Հոնկոնգ և Հարավային Կորեա (այդ ժամանակ հայտնի էին որպես «ասիական վագրեր»), սկիզբ դրեցին լավատեսության դարաշրջանի: Իրականում, այդ տնտեսություններում տեղի ունեցավ վարկերի ավելցուկային երկարաձգում ու չափազանց մեծ պարտքի կուտակում: 1997 թվականի հուլիսին Թաիլանդի կառավարությունը ստիպված եղավ հրաժարվել ԱՄՆ-ի դոլարի՝ իր կողմից ամրագրված փոխարժեքից: Դա խուճապի ալիք առաջացրեց ասիական ֆինանսական շուկաներում և արագորեն հանգեցրեց միլիարդավոր դոլարների օտարերկրյա ներդրումների համատարած արտահոսքին: Երբ խուճապը տարածվեց շուկաներում, և ներդրողները սկսեցին զգուշանալ Արևելյան Ասիայի կառավարությունների հնարավոր սնանկացումներից, տիրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի վախը: Տարիներ պահանջվեցին, որպեսզի ամեն ինչ ընթանա բնականոն հունով: Արժույթի միջազգային հիմնադրամը ստիպված եղավ քայլեր ձեռնարկել՝ ստեղծելով «փրկության փաթեթներ» առավել տուժած տնտեսությունների համար, օգնելով, որ վերջիններս խուսափեն դեֆոլտից:

5. 2007–2008 թվականների ֆինանսական ճգնաժամը

2007-2008 թվականների ֆինանսական ճգնաժամը, որը նաև հայտնի է որպես Համաշխարհային ֆինանսական ճգնաժամ, խոշոր իրադարձություն էր, որը խոր հետք թողեց համաշխարհային տնտեսության վրա: Այս ճգնաժամի առաջացման պատճառները բազմաթիվ էին: Առաջինը հիպոթեքային վարկերի ճգնաժամն էր, ինչը ԱՄՆ-ի բնակարանային «պղպջակի» պայթելու հետևանք էր՝ պայմանավորված հիպոթեքային վարկերի ավելացմամբ և արժեթղթավորմամբ: Վարկավորման թույլ փորձը, ռիսկերի ոչ համարժեք գնահատումը և ֆինանսական նորամուծությունները նպաստեցին հիպոթեքային շուկայի արհեստական աճին: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման հաջորդ պատճառն արժեթղթավորումն ու ֆինանսական ածանցյալ գործիքներն էին[9]: Այս ճգնաժամը զգալի ազդեցություն ունեցավ համաշխարհային տնտեսության տարբեր ուղղությունների վրա և նշանավորվեց տնտեսական ակտիվության մակարդակի նվազմամբ ու գործազրկության աճով: Ռեցեսիան Միացյալ Նահանգներից տարածվեց աշխարհի այլ մասեր՝ հանգեցնելով համաժամանակյա համաշխարհային տնտեսական անկման[10]:

Ճգնաժամը, միաժամանակ, բացահայտեց պետական ֆինանսների խոցելիությունը հատկապես այն երկրներում, որտեղ առկա էին պետական պարտքի բարձր մակարդակ և հարկաբյուջետային անհավասարակշռություն: Հետագայում պարտքի ճգնաժամը տարածվեց նաև Հունաստանում, Պորտուգալիայում և Իռլանդիայում:

6. COVID-19 համավարակը

Համաշխարհային տնտեսությունը ցընցած վերջին իրադարձություններից մեկը COVID-19 համավարակի տարածումն էր աշխարհում: Առողջապահական ճգնաժամը շատ արագորեն փոխակերպվեց ֆի-

[9] Andrew Ross Sorkin, "Too Big to Fail: The Inside Story of How Wall Street and Washington Fought to Save the Financial System--and Themselves", 2010.

[10] "The Financial Crisis Inquiry Report" by the Financial Crisis Inquiry Commission (2011).

նանսատնտեսականի՝ տարբեր երկրներում հանգեցնելով անհավասարության կտրուկ աճի: Ընդ որում, զարգացող տնտեսություններին և տնտեսապես անապահով խմբերին շատ ավելի մեծ ժամանակ պետք եկավ համավարակի հետևանքով առաջացած եկամտի և ապրուստի միջոցների կորուստները վերականգնելու համար: Ի տարբերություն նախորդների, համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամը մի շարք երկրներում շատ արագ կերպով հաղթահարվեց՝ հասցեական տնտեսական քաղաքականությունների կիրառմամբ: Բայց և այնպես, արտակարգ իրավիճակում աճեց տնտեսության մասնավոր և պետական պարտքը, բարձրացավ գործազրկության ու աղքատության մակարդակը, վատթարացան մի շարք երկրների սոցիալ-տնտեսական ցուցանիշներ[11]:

Ինչպես և կարելի էր ենթադրել, համավարակի տնտեսական հետևանքները հատկապես ծանր էին զարգացող տնտեսությունների համար, որտեղ եկամուտների կորուստները պատճառ դարձան տնտեսական ձախողումների ու մարտահրավերների: Ճգնաժամը կտրուկ ազդեցություն ունեցավ համաշխարհային աղքատության և անհավասարության վրա: Համաշխարհային աղքատության մակարդակը տևական ժամանակահատվածի համեմատ առաջին անգամ աճեց, և անապահով բնակչության շրջանում եկամուտների անհամաչափ կորուստները հանգեցրին անհավասարության կտրուկ աճի: Եկամտի կորուստներն ավելի մեծ են եղել երիտասարդների, կանանց, ինքնազբաղվածների շրջանում:

Որտեղ է ձախողել Հայաստանի տնտեսությունը

Անկախությանը հաջորդող տարիների ընթացքում Հայաստանի տնտեսությունը տարբեր ժամանակահատվածներում բախվել է մի շարք մարտահրավերների ու խոչընդոտների, որոնք բավական բարդացրել են կայուն զարգացման ապահովման հնարավորությունները:

Ձախողման հիմնական պատճառների ամբողջացումը ցույց է տալիս, որ մեր երկրի համար տարիներ շարունակ լուրջ մարտահրավեր է եղել դիվերսիֆիկացման (բազմազանեցման) ցածր աստիճանը, որը տնտեսությունը բավական խոցելի ու զգայուն է դարձնում համաշխարհային «ցնցումների» նկատմամբ: Ընդ որում, սա վերաբերում է ինչպես տնտեսության ճյուղային կառուցվածքին՝ հանքահումքային արդյունաբերության ծավալների մեծ տեսակարար կշռով, այնպես էլ արտաքին առևտրին, միգրանտների փոխանցումներին և ՕՈՒՆ-ին:

Հաջորդ լուրջ խնդիրը կապված է միգրացիոն հոսքերի մեծ տեսակարար կշռի ու, դրանով պայմանավորված, արտաքին դրամական փոխանցումներից կախվածության հետ: 2022 թվականին ֆիզիկական անձինք բանկերի միջոցով արտերկրից Հայաստան են փոխանցել մոտ 5.2 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար[12], ինչը դեպի Հայաստան կատարված դրամական փոխանցումների պատմության մեջ աննախադեպ ցուցանիշ է: Ընդ որում, 2021 թվականի համեմատ, 2022 թվականին դրամական փոխանցումներն աճել են 2.5 անգամ[13]: Մյուս կողմից, ըստ ծագման երկրների դրամական փոխանցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիվերսիֆիկացման լուրջ խնդիր կա: Այսպես՝ փոխանցումների «առյուծի բաժինը»՝ շուրջ 3.6 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար, կատարվել է Ռուսաստանի Դաշնությունից, ինչը 4 անգամ ավելի է 2021 թվականի ցուցանիշից և կազմում է ընդհանուր դրամական փոխանցումների 69%-ը[14]:

Տարիներ շարունակ արձանագրված միգրացիոն հոսքերը, զուգորդվելով ծնե-

[11] Tom Bundervoet, María Eugenia Dávalos, and Natalia Garcia, "The Short-Term Impacts of COVID-19 on Households in Developing Countries: An Overview Based on a Harmonized Data Set of High-Frequency Surveys," Policy Research Working Paper 9582, World Bank, Washington, DC, 2021, https://openknowledge.worldbank.org/handle/10986/35290

[12] ՀՀ ԿԲ, Վիճակագրություն, արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

[13] ՀՀ ԿԲ, ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2022 թ. դեկտեմբեր, էջ 222, https://www.cba.am/AM/pperiodicals/Statistical%20overview%20XII.2022.pdf)

[14] Նույն եղում:

լիության ցածր մակարդակի հետ, Հայաստանի ժողովրդագրական համայնապատկերում բավական լուրջ ճգնաժամ են ձևավորել: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում ժողովրդագրական «համաճարակի» դեմ պետական քաղաքականության «ճակատային հարձակման» կառուցակարգերի կիրառման:

Հայաստանի տնտեսության մեկ այլ «ձախողում» կարելի է համարել տարածաշրջանային տրանսպորտային շրջափակումը, որն ավելի է սրվում՝ պայմանավորված ծովային ելքի բացակայությամբ: Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով ռազմավարական առումով կենսական նշանակություն ունեցող Հարավային Կովկասի տարածաշրջանում, տրանսպորտի հարցերում մշտապես բախվում է աշխարհագրական դիրքով և աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված մարտահրավերների: Վերջիններս հանգեցնում են Հայաստանի տրանսպորտային ու լոգիստիկ ենթակառուցվածքների շահագործման և զարգացման ծախսերի բարձրացմանը: Արդյունքում, երկրում լոգիստիկ ոլորտը զարգացման ցածր մակարդակում է, որի հիմնական պատճառներն են հարևան երկրների հետ լարված հարաբերությունները (շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից), դեպի ծով ելքի բացակայությունը, տրանսպորտային թույլ ենթակառուցվածքները, ոլորտային կարգավորման մի շարք բացթողումներ և այլն:

Բացի այդ, Հայաստանի տնտեսության համար լուրջ ձախողում կարելի է համարել աղքատության և գործազրկության բարձր ու միջին ամսական անվանական աշխատավարձի ցածր մակարդակը: Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, 2023 թ. հունվարին Հայաստանում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 249,278 դրամ: Մասնավորապես՝ պետական ոլորտում դա 189,456, իսկ ոչ պետական ոլորտում՝ 274,956 դրամ է: Գործազրկության մակարդակը Հայաստանում 2021 թվականին 15.5% էր, իսկ աղքատության մակարդակը՝ 26.5%[15]:

Ի վերջո, Հայաստանի տնտեսությունը «ձախողող» գործոններից է Արցախի շուրջ ծավալվող տարիներ շարունակ առկա համակարտությունն Ադրբեջանի հետ, որն ուղեկցվում է պարբերական ռազմական բախումներով և պատերազմներով: Չընդհանվող աշխարհաքաղաքական խաղերը, տարածաշրջանային լարվածությունն ու COVID-19 համավարակը մեր երկրի տնտեսության համար լրջագույն մարտահրավերներ են, որոնք այս կամ այն կերպ խոչընդոտում են կայուն զարգացման հնարավորությունների ապահովումը:

[15] ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2023 թ. հունվար-հունիս, https://armstat.am/file/article/f_sec_2_2023_1.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կենտրոնական բանկ, Վիճակագրություն, արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
2. ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր, 2022 թ. դեկտեմբեր, էջ 222, https://www.cba.am/AM/pperiodicals/Statistical%20overview%20XII.2022.pdf)
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2023 թ. հունվար-հունիս, https://armstat.am/file/article/f_sec_2_2023_1.pdf
4. Acemoglu, D., Robinson J. A, 2012. Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty (1st). 1st ed. New York: Crown, 25.
6. Andrew Ross Sorkin, Too Big to Fail: The Inside Story of How Wall Street and Washington Fought to Save the Financial System---and Themselves, 2010.
7. Benjamin Roth, The Great Depression: A Diary, August 31, 2010.
8. Chancellor E., A New View of the Bubble of 1720, 1999.

9. Charles P. Kindleberger, The World in Depression, 1929–1939, 40th Anniversary Edition, January 2013.
10. Jonathan D. Ostry, Andrew Berg, and Charalambos G. Tsangarides, Redistribution, Inequality, and Growth, April 2014, https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2014/sdn1402.pdf
11. Piketty Th., Capital in the Twenty-First Century, 2013, Éditions du Seuil, Harvard University Press.
12. "The Financial Crisis Inquiry Report" by the Financial Crisis Inquiry Commission (2011).
13. Tom Bundervoet, María Eugenia Dávalos, and Natalia Garcia, The Short-Term Impacts of COVID-19 on Households in Developing Countries: An Overview Based on a Harmonized Data Set of High-Frequency Surveys, Policy Research Working Paper 9582, World Bank, Washington, DC, 2021, https://openknowledge.worldbank.org/handle/10986/35290

Татевик ВАРДАНЯН
Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ, кандидат экономических наук

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ПРОВАЛА СТРАН

Экономическое процветание или упадок наций — сложное явление, на которое влияют различные факторы и обстоятельства. В разные периоды мировой истории некоторые страны переживали экономические спады, стагнации и даже коллапсы. Будь то внутри отдельных стран или в глобальном масштабе, финансовые и экономические кризисы являются неотъемлемыми фазами экономического цикла, часто обнажая целый ряд социально-экономических проблем и проблем. Поэтому крайне важно изучить теоретические основы, лежащие в основе экономических факторов, способствующих неудачам страны, изучить примеры из реальной жизни и, что наиболее важно, вникнуть в коренные причины экономических проблем Армении. Подобный анализ может дать Армении ценные уроки с точки зрения предотвращения экономических кризисов и снижения рисков.

Ключевые слова: *экономический провал, экономические институты, кризисы, вызовы экономики Армении*

Tatevik VARDANYAN
Lecturer of the Chair of International Economic Relations, ASUE, PhD in economics

GEOECONOMIC CHRONICLE

ECONOMIC CAUSES OF COUNTRIES FAILURE

The economic prosperity or decline of nations is a complex phenomenon influenced by various factors and circumstances. Throughout different periods in world history, several countries have experienced economic setbacks, stagnation, and even collapses. Whether within individual countries or on a global scale, financial and economic crises are inherent phases of the economic cycle, often exposing a range of socio-economic issues and challenges. Therefore, it is crucial to explore the theoretical foundations underlying the economic factors contributing to a nation's failure, examine real-world examples, and, most importantly, delve into the root causes of Armenia's economic challenges. Such an analysis can provide valuable lessons for Armenia in terms of averting economic crises and mitigating risks.

Keywords: *economic failure, economic institutions, crises, challenges of Armenia's economy*